ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) արտահերթ նիստի

Ք. Երևան

25 նոյեմբերի 2019 թվական

Ժամը՝ 11:30-13:30

Մասնակցում էին՝

Տ. Խաչատրյան - ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)

Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)

Ա. Պողոսյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Ռ. Գրիգորյան - ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)

Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Բ. Պիպոյան - «Իրազեկ և պաշտպանված սպառող» ՀԿ նախագահ (Խորհրդի անդամ)

Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող, կենսաբանական գիտությունների թեկնածու (Խորհրդի անդամ)

Մ. Բեգլարյան - ՀՀ ԳԱԱ-ի Էկոլոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոնի Սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (Խորհրդի անդամ)

Ա. Պետրոսյան - «ՓՄՁ – համագործակցության Ասոցիացիա» ՀԿ (Խորհրդի անդամ)

Գ. Ավետիսյան – Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

Գ. Սարոյան - Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Ն. Հայրապետյան - Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Հ. Ասլանյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ

Ա. Դանիելյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի, շուկայի վերահսկողության և սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետ

Լ. Մինասյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի, շուկայի վերահսկողության և սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության խորհրդական

Մ. Երիցյան - Իրավաբանական վարչության պետի պարտականությունները կատարող

Հ. Թումոյան - Տեղեկատվական տեխնոլոգիաների և ռիսկերի կառավարման վարչության պետի պարտականությունները կատարող

Բացակայում էր՝

Ա. Թորոսյան – ՀՀ առողջապահության նախարար (Խորհրդի անդամ)

Ողջունելով ներկաներին՝ Խորհրդի նախագահը փաստեց, որ քվորումն ապահովված է և առաջարկեց քվեարկել օրակարգի հաստատման համար: Խորհրդի՝ քվեարկությանը մասնակցող անդամների 9 կողմ ձայներով հաստատվեց արտահերթ նիստի օրակարգը:

Բ. Պիպոյանի առաջարկությամբ փոփոխություն մտցվեց օրակարգային հարցերի քննարկման հերթականության մեջ՝ բովանդակային առումով քննարկումների առավել մեծ ծավալ ունեցող հարցերին առաջնահերթություն տալու նկատառումով:

Բ. Պիպոյանը հիշեցրեց, որ Խորհրդի նախորդ նիստում դեմ է քվեարկել 2019 թվականի ստուգումների պլանին, քանի որ խնդիրը ոչ թե ցանկի վերաբերյալ է, այլ տեսչական գործիքի կիրառման մասով, այսինքն՝ ծառայությունից տեսչական մարմին անցումը լիարժեք կատարված չէ, և ստուգում իրականացնողները դեռևս ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության տեսուչներ են: Ստուգումների պլանին պետք է անդրադառնալ մարմնի վերակազմակերպման ցիկլի ավարտից հետո: Միաժամանակ, պետք է քննարկել որոշակի ժամկետով բացված ստուգումն իրականացնելու համար տեսուչների թվաքանակը պարզելու հարցը, թե արդյոք տեսչական գործառույթ իրականացնող տեսուչների թիվը համապատասխանում է ստուգումների քննարկման ներկայացված պլանին:

Նախարարն առաջարկեց որպես օրակարգային առաջին հարց՝ քննարկել տեսչական մարմնի կանոնադրության և կառուցվածքի հարցը:

1. «Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի

դեկտեմբերի 30-ի թիվ 1730-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծեր

(Գ. Ավետիսյան, Ա. Ասոյան, Ա. Պողոսյան, Ռ. Գրիգորյան, Բ. Պիպոյան, Ա. Առաքելյան, Տ. Խաչատրյան)

Գ. Ավետիսյանը ներկայացրեց, որ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ կառավարությանը և վարչապետին ենթակա մարմնի կանոնադրությունը հաստատում է վարչապետը: Վարչապետի որոշման նախագծում ներառված են ներկայումս գործող օրենքներով Տեսչական մարմնին վերապահված լիազորությունները, ամրագրված են տեսչական մարմնում կառուցվածքային փոփոխությունների եղանակները: Միաժամանակ, վարչապետի որոշման ընդունմամբ պայմանավորված է գործող կանոնադրության ուժը կորցրած ճանաչելու հանգամանքը:

Գ. Ավետիսյանը նշեց, որ ներկայացվող նախագծի շուրջ տարաձայնություններ կան Տեսչական մարմնի և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ) միջև: Նա հավելեց, որ միայն Տեսչական մարմնի կողմից ներկայացվող կառուցվածքով գործելու պարագայում տեսչական մարմինը կարող է կատարել իր առջև դրված կանոնադրական բոլոր խնդիրները և տեսչական գործառույթները: Տեսչական մարմնի կառուցվածքում որպես առանձին ստորաբաժանում միջազգային համագործակցության վարչության անհրաժեշտությունը Գ. Ավետիսյանը հիմնավորեց միջազգային կառույցների հետ մշտական կապի և համագործակցության, այդ ոլորտում աշխատանքների հսկայական ծավալով, իսկ արագ արձագանքման բաժնի անհրաժեշտությունը՝ հայտնաբերված վտանգավոր սննդամթերքի մասին տեղեկատվությանն արագ արձագանքելու և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտությամբ: Նա պարզաբանեց, որ ներկայումս այս գործառույթն իրականացնում է Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով ստեղծված արագ արձագանքման խումբը, որը կազմված է տարբեր ստորաբաժանումների մասնագետներից: Գ. Ավետիսյանը հավելեց, որ ներկայացվող նախագծով մի քանի սահմանային հսկիչ կետեր միավորվում են:

Բ. Պիպոյանը կարծիք հայտնեց, որ կառուցվածքի 4-րդ կետում պետք է ավելացել «կառավարման» բառը: Քանի որ սննդամթերքի ռիսկի գնահատումը և տնտեսվարողների ռիսկի գնահատումը էականորեն տարբերվում են միմյանցից, և տնտեսվարող սուբյեկտների ռիսկի գնահատումը կառավարման գործընթաց է, պետք է տարբերակել ցածր և բարձր ռիսկայնության ազդեցությունը մարդու առողջության վրա, այսինքն՝ հարցը դիտարկել առողջական ռիսկեր պարունակելու տեսակետից: Սննդամթերքի անվտանգության ռիսկերի գնահատումը գիտական գործունեություն է, առանձին աշխատանք է, իսկ հաշվարկը կառավարում է: Կառավարումը գնահատման շարունակությունն է, և անհրաժեշտ է, որ գնահատումն իրականացվի գիտական կազմակերպության, իսկ կառավարումը՝ տեսչական մարմնի կողմից:

Ա. Առաքելյանը առաջարկեց Տեսչական մարմնի կանոնադրության 3-րդ բաժնի 27 կետում ամրագրել Տեսչական մարմնի համագործակցությունը ՀՀ ԳԱԱ ոլորտային գիտաճետազոտական կազմակերպությունների հետ:

Նախարարը նշեց, որ օրինակելի կանոնադրությունը օրինակելի է նրա համար, որ լինի ուղենշային, բայց եթե կան սպեցիֆիկ առանձնահատկություններ, դրանք կարտահայտվեն կոնկրետ կանոնադրություններում, և օրինակելի կարգում, քանի որ Գրասենյակը չի տարանջատել տեսչական մարմինների տարբեր առանձնահատկությունները, այլ միավորել է դրանք, և այստեղ գնահատումը ազդեցության գիտական մասին պիտի պատասխաներ, շփոթություն չառաջացնելու համար պետք է խոսել հատկապես այն մասին, որ տնտեսվարող սուբյեկտների ռիսկերի կառավարումն անհրաժեշտ է կառավարման գործընթացը ճիշտ կիրառելու նպատակով:

Ա. Ասոյանը հավելեց, որ սկզբունքորեն կարևոր է, որ ռիսկերի գնահատում իրականացնող ստորաբաժանման անվանումը համապատասխանի ՀՀ կառավարության 2018 թվականի N 624-Լ որոշմամբ հաստատված կառավարությանը ենթակա տեսչական մարմնի կանոնադրության օրինակելի ձևին: Ասոյանը առաջարկեց, որ եթե կա նման խնդիր գնահատում-կառավարում բառախաղի ամրագրման մեջ, ապա այդ հարցը կարելի է լուծել կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրություններով, այլապես մենք նախադեպ ենք ստեղծում այլ տեսչական մարմինների համար: Կանոնադրության տիպային ձևի մեջ ամրագրված են այն պարտադիր վարչությունները, որոնք տեսչական մարմինը պետք է ունենա և այդպիսին է հանդիսանում «ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչությունը»:

Բ. Պիպոյանը մեկնաբանեց, որ ռիսկի գնահատում ասվածը միջազգային բոլոր փաստաթղթերում որպես հասկացություն առանձին սահմանվում է, թե ինչ է «ռիսկի գնահատում սննդի շղթայում», սկսած «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքից, վերջացրած մյուս այլ փաստաթղթերով, ԵՏՄ-ի իրավակարգավորումներով: Հստակ սահմանված է, որ տեսչական մարմինը ռիսկի գնահատումով չի զբաղվում, և այդ գործառույթը, որ տեսչական մարմինը պիտի կատարի, հակասության մեջ է ռիսկի գնահատման սահմանման հետ: Պետք է արձանագրել, որ միջազգայնորեն սահմանված տերմինի հետ կա հակասություն:

Ա. Ասոյանը պարզաբանեց, որ այստեղ խոսքը ուրիշ գնահատման մասին է ու խնդիրը կայանում է նրանում, որ ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչությունը բնորոշ է բոլոր մարմիններին, Կառավարության որոշմամբ հաստատված է օրինակելի ձև, և ներկայացված ձևակերպումը բխում է և՛ օրենքից, և՛ օրինակելի ձևից:

Այստեղ քննարկման առարկա է դարձել ստորաբաժանման անվանման հարցը, սակայն ստորաբաժանումների գործառույթների խնդիրները կարգավորվում են յուրաքանչյուր ստորաբաժանման կանոնադրություններով, որտեղ կարող ենք սպառիչ թվարկել ռիսկերի և՛ գնահատման, և՛ կառավարման չափանիշները: Այնուհանդերձ, ռիսկի գնահատման ստորաբաժանման անվանման բոլոր տեսչական մարմինների համար միատեսակ կիրառելու խնդիրը բազմիցս քննարկվել է: Նույն տրամաբանությամբ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնում կան ռիսկեր, որ գնահատվում

են տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից, Շուկայի վերահսկողության տեսչական մարմնում կան ռիսկերի գնահատման համակարգեր և այլն, և այդ բոլոր ռիսկերը գնահատվում են հաշվի առնելով յուրաքանչյուր տեսչական մարմնի առանձնահատկությունները, սակայն սննդի տեսչական մարմնի ռիսկերի գնահատման ստորաբաժանման անվանման մեջ փոփոխություն կատարելն անհարկի տարանջատում է մյուս տեսչական մարմինների նկատմամբ դրսևորված միատեսակ մոտեցումից:

Հայաստանի Հանրապետությունում «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հստակ ամրագրված է, ռիսկայնության չափանիշները, որոնք պետք է գնահատվեն բոլոր տեսչական մարմիններում ստեղծվող ռիսկերի գնահատման վարչություններում: Որևէ անհրաժեշտություն չկա կատարելու նորամուծություններ:

Ամբողջապես համամիտ լինելով պարոն Պիպոյանի հետ՝ անհրաժեշտ է արձանագրել սակայն, որ այստեղ տարբեր ռիսկերի մասին է խոսվում. այս վարչությունը չպետք է զբաղվի հենց այն ռիսկի գնահատմամբ, որը ակնկալում է պարոն Պիպոյանը: Սա զուտ տնտեսվարողների ռիսկայնություն որոշելու գործառույթ իրականացնող վարչություն է: Այսինքն, պարզել թե տնտեսվարողը ո՞ր «իքս» կամ «իգրեկ» ոլորտում է գործունեություն ծավալում և ո՞րն է այդ ոլորտներից առավել ռիսկային, ոչ թե մեղրի ռիսկայնության աստիճանի և հանրության վրա ունեցած ռիսկայնության չափանիշների մասին: Ասոյանը հավելեց, որ նախորդ նիստի ժամանակ ևս խոսվեց այս մասին, որ նման ռիսկերի գնահատումն իրականացնում են հատուկ գիտական կազմակերպությունները: Անդրադառնալով տեսչական մարմնի կառուցվածքին վերաբերող հարցերին, Բ. Պիպոյանը մատնանշեց տեսուչների մասնագիտական պատրաստվածությունը նշելու պահանջը, որը պետք է հստակ դրվի յուրաքանչյուր հաստիքի դեպքում:

Նախարարը պարզաբանեց, որ եթե քննարկվում է կառուցվածքային ստորաբաժանման անունը, այդ առանձնահատկություններին պետք չէ անդրադառնալ, եթե քննարկվում է գործառույթը, պետք է հետ գնալ, կարդալ գործառույթները և հասկանալ, թե այդ գործառույթով զբաղվող կառուցվածքային ստորաբաժանում կա արդյոք տեսչական մարմնում:

Հակադրելով Ա. Ասոյանին, Բ. Պիպոյանը նշեց, որ տարբեր աշխատողներ տարբեր ռիսկերի հետ գործ ունեն, բայց սննդի ոլորտն ունի սպեցիֆիկա, սկսած այն բանից, որ օրինակ Եվրամիության անդամ երկրներում (Գերմանիա, Իտալիա, Դանիա) ոչ պարենային ապրանքների համար գիտական կենտրոնի գործունեությունը տարբերվում է պարենային ապրանքների համար գիտական կենտրոնի գործունեությունից: Այս երկուսն աշխատում են տարբեր մեթոդաբանություններով, տարբեր փիլիսոփայությամբ, և միասնական պարտադիր մարմինը չունի ո՛չ պարենայինը, ո՛չ հակահրդեհայինը, սակայն և՛ սննդամթերքը, և՛ բնապահպանականը՝ ունեն: Սրանք նույնացնել հնարավոր չէ:

Նախարարն առաջարկեց ռիսկերի կառավարումը մշակելիս հաշվի առնել իրական ռեսուրսները:

Նախարարն առաջարկեց պարզեցնել քննարկումը և պարզաբանելով Ա. Ասոյանի կարծիքը՝ նշեց, որ եթե մոտ են մնում օրինակելի կանոնադրությանը, կարող են անվանումը հաստատելիս օգտագործել «գնահատում» բառը, հետո գործառույթները նկարագրելիս յուրաքանչյուր ստորաբաժանման կանոնադրությունը հաստատելիս ձևակերպել, թե գնահատումը որտեղ է սկսվում և որտեղ ավարտվում:

Բ. Պիպոյանն առաջարկեց մյուս փաստաթղթերի հետ խնդիրներ չունենալու և գործընկերներին շփոթության մեջ չդնելու նպատակով «գնահատում» բառի կողքին փակագծերում գրել «կառավարում» բառը:

Ա. Ասոյանը նշեց, որ որպես ներկայիս կառավարության քաղաքական դիրքորոշում՝ Տեսչական մարմինների համակարգում տեղի է ունեցել օպտիմալացում: Տեսչական մարմիններում աշխատողների թիվը փաստացի անհամեմատելի է կրճատվել: Ամբողջ համակարգում աշխատում է մոտավորապես 1136 մարդ, որը ձևավորվել է, եթե չեմ սխալվում մոտ 400 աշխատակից կրճատվելու արդյունքում:

Ռ. Գրիգորյանի կարծիքով, ստորաբաժանումների գործառույթների փոփոխություններով պայմանավորված փոփոխվում է նաև կանոնադրությունը: Նա առաջարկեց արդարադատության նախարարության առաջարկությունների հիման վրա լրամշակված տարբերակը ներկայացնել Խորհրդի անդամներին:

Ա. Ասոյանը նշեց, որ նախկինում տեսչական մարմինների կանոնադրությունը հաստատվում էր կառավարության որոշմամբ, իսկ 2018թ.-ին, երբ տեսչական մարմինները սկսեցին գործել կառավարության ենթակայության տակ, վերջիններիս կանոնադրությունները դարձան վարչապետի որոշմամբ հաստատվող փաստաթուղթ: Առկա խնդիրը կայանում է, նրանում, որ «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքով, սահմանված է բացառություն Սննդամթերքի տեսչական մարմնի համար, որով բոլոր իրավական հիմքերն ապահովված են: Հատուկ հոդվածով կարգավորում է տրված նաև տեսչական մարմնի աշխատակիցների համար, որով երաշխավորվում է իրենց պաշտոնավարման շարունակական բնույթը: Կանոնադրության հաստատումից հետո միայն, Խորհուրդը կհաստատի անվանացանկն ու քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը: Այս առումով օրենքը կարգավորում է բոլոր բացերը: Այլ հարց է, որ կանոնադրության ընդունման այսօրվա նպատակը մարմնի գործառույթներն օրենքին և գործող իրավակարգավորումներին համապատասխանեցնելն է այս փուլում: Յուրաքանչյուր ստորաբաժանման նպատակահարմարությունը կամ աշխատողների քանակը կամ օպտիմալացման անհրաժեշտությունը քննարկման առարկա չեն եղել: Այս փուլի նպատակը պարզապես օրենքի պահանջների և փաստացի իրականության անհամապատասխանությունը վերացնելն է:

Ա. Ասոյանը ներկայացրեց նաև մի քանի նկատառումներ: Օրինակ՝ առաջարկեց ներքին անվտանգության և աուդիտի վարչությունը չվերակազմակերպել որպես որակի ապահովման վարչություն, քանի որ որակի ապահովման գործառույթը չի կարող նույնականացնել աուդիտի հետ, իսկ ֆինանսների նախարարության առաջարկով աուդիտի գործառույթը նախատեսվում է պատվիրակել մասնավորին: Ավելին, գործող

առաջարկի տարբերակում մտավախություն կա, որ աշխատողների աշխատանքի շարունակական լինելու իրավունքի շրջանակում կարող են խնդիրներ առաջանալ: Հաշվի առնելով այդ հանգամանքները՝ առաջարկվեց ներքին անվտանգության և աուդիտի վարչությունը հանել և ստեղծել նոր որակի ապահովման վարչություն: Խորհրդի անդամներին ներկայացված կանոնադրությունների նախագծերն ամփոփված չեն և չեն համապատասխանում շրջանառված և ամփոփված տարբերակին:

Ա. Ասոյանը հավելեց նաև, որ այսօր Սննդամթերքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելը օրհասական խնդիր է, քանի որ առկա են որոշ գործառույթների կրկնություն: Մասնավորապես, հաշվապահական հաշվառման, գնումների կազմակերպման (ֆինանսաբյուջետային), անձնակազմի կառավարման հետ կապված վարչական (կազմակերպչական) բնույթի գործառույթները ներկայումս իրականացնում է և՛ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը, և՛ տեսչական մարմինը: Նման վարչություններ տեսչական մարմինը չպետք է ունենա, և կանոնադրությունը այս տարի չհաստատելու դեպքում, առաջիկա տարվա բյուջեով տեսչական մարմնի համապատասխան աշխատակիցների համար վարձատրություն նախատեսված չէ: Կանոնադրությունը պետք է հաստատել հնարավորինս սեղմ ժամկետներում: Եթե հնարավոր լինի դիտարկել վատագույն տարբերակը, և Խորհրդի անդամներն ունենան նշված կանոնադրության վերաբերյալ բացասական դիտարկումներ, ապա կանոնադրության մեջ հնարավոր չէ ներառել այն ինչը սահմանված չէ գործող օրենսդրությամբ: Հնարավոր չէ գրել ավելին, քան գործող ՀՀ կառավարության 2010 թվականի N 1730-Ն որոշումն է: Սա միանշանակ մի քանի քայլ առաջ է, որը բերում օրենքի համապատասխանեցման: Ներկայումս միայն Սննդի տեսչական մարմինն է, որ չունի օրենքի տառին համապատասխանող կանոնադրություն:

Անդրադառնալով խորհրդում հնչեցված տեսչական մարմնի կազմում միջազգային ստորաբաժանում ունենալու հարցին՝ պարոն Ասոյանը նշեց, որ որևէ տեսչական մարմին այս պահին չունի միջազգային համագործակցության վարչություն: Բոլոր տեսչական մարմինները ստուգմամբ զբաղվող պետական մարմիններ են: Արդյունքում որևէ կառուցվածքային ստորաբաժանման անհրաժեշտությունը պետք է հիմնավորել հստակ փաստերով, օրինակ՝ ինչո՞վ է զբաղվել այդ ստորաբաժանումը, ի՞նչ արդյունքներ է արձանագրել, ինչպիսի՞ աշխատանքի արդյունավետության պատճառահետևանքային ազդեցություն է թողել և ինչ գործառույթներ է իրականացրել, որի բացակայությունը կարող է բացասաբար ազդել տեսչական ստուգումներ իրականացնելու կոչված պետական մարմնի գործունեության վրա: Տեսչական մարմինը նույն հաջողությամբ կարող է ունենալ միջազգային համագործակցության պատասխանատու և ոչ թե մի ամբողջ վարչություն:

Բ. Պիպոյանն առաջարկեց տեսչական մարմնի կառուցվածքի վերաբերյալ իր դիտարկումները ներկայացնել առանձին-առանձին: Դեռևս 2013 թվականին, երբ տեսչական մարմնի կառուցվածքը միջազգային փորձաքննության է անցել (ուժի մեջ է մտել 2015 թվականին), փորձաքննության է անցել նաև հաստիքացուցակը և յուրաքանչյուր հաստիքի համար անդրադարձ է եղել և հստակ առանձնացվել է՝ սննդի

տեսուչ, անասնաբույժ տեսուչ և բուսասանիտարիայի տեսուչ: Հստակեցված էին բոլոր գործառույթները, և բուսասանիտարը, որը հստակ գիտի՝ ինչ է բույսը, միջատը, կարող էր գնալ, այդ գործն անել, բայց նա հետո սննդի արտադրություն եթե պիտի ստուգի, նույնն է, որ դրվի միայն բարձրագույն կրթության պահանջ: Այս հարցերը պետք է քննարկել նեղ ոլորտային ուղղության մեջ, և եթե նշում ենք վարչություն, դրա կազմում նախատեսու՞մ ենք ունենալ ստուգողներ, տեսուչներ, թե՞ միայն լինելու են վերլուծություն կատարողներ և փաստաթղթեր կազմողներ, ընդամենը քանի՞ հաստիք է լինելու վարչության կազմում, դրա ո՞ր մասն են լինելու տեսուչներ, մասնագիտական պահանջը հանվելու՞ է, թե՞ ոչ:

Նախարարը խնդրեց պարզաբանել, թե արդյո՞ք Խորհրդին է պատկանում ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու իրավասությունը, և որքա՞ն պետք է Խորհուրդը մտնի միկրոկառավարման (միկրոմենեջմենթի) մեջ: Նախարարի կարծիքով, ճիշտ կլինի, որ Խորհուրդը քննարկի գործառույթները, իսկ դրանց որակյալ սպասարկումը վերապահվի տեսչական մարմնի ղեկավար կազմին:

Նախարարը խոսեց 2020թ. բյուջեի մասին, թե որքան աշխատավարձի ֆոնդ է նախատեսված, քանի հաստիքային միավոր կա: Պետք է հասկանալ, որ նկարագրված գործառույթները 150000 ՀՀ դրամ հաշվարկային աշխատավարձի դեպքում դժվար է պատկերացնել, թե ինչպես կարող են սպասարկվել բարձր մակարդակով: Նա առաջարկեց քննարկել 340 հաստիքի փոխարեն փոքր թվով հաստիքների միջոցով ապահովել այդ գործառույթների իրականացումը, իսկ խնայված գումարներն օգտագործել որպես պարգևավճար:

Բ. Պիպոյանը ներկայացրեց, որ 2011 թվականին ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունն ուներ 160 հաստիք, և քանի որ ծառայության պետը գիտակցում էր, որ առանց կոռուպցիայի հնարավոր չէր տեսչական գործառույթը կատարել որակյալ, բարձր մակարդակով, ՀՀ Վարչապետի համաձայնությամբ մեծացրեց հաստիքների թիվը՝ դարձնելով 230 հաստիք, ավելացված հաստիքները թողեց որպես թափուր, իսկ աշխատավարձի խնայողությունը բաշխեց աշխատակիցներին՝ որպես պարգևավճար: Պետը հասկանում էր, որ առանց որակյալ մասնագետ-տեսուչի հնարավոր չէ տեսչական գործառույթն իրականացնել բարձր մակարդակով, իսկ առանց պատշաճ վարձատրության՝ ունենալ որակյալ մասնագետ-տեսուչ:

Նախարարին հետաքրքրեց, թե ինչպես է կատարվել հաստիքների համալրումն այն պարագայում, երբ մարմնի գործառույթներն ըստ էության չեն փոխվել: Նա առաջարկեց քննարկել այդ հարցը և մշակել պլան, թե ինչպես փաստացի օպտիմալացման արդյունքում կարելի է բարձրացնել աշխատակիցների աշխատավարձը:

Խոսելով արտաբյուջեի մասին՝ Բ. Պիպոյանը փաստեց, որ այն որպես գործիք սկսեց կիրառվել 2012 թվականից: Այդ ժամանակ այն ավելի շատ հավաքվող արտաբյուջե էր, որ բաժանվում էր 160 աշխատակիցներին, իսկ հիմա ավելի քիչ հավաքվող գումարը բաշխվում է ավելի մեծ թվով աշխատակիցների: Նախկինում աշխատավարձին արտաբյուջեից ավելանում էր մոտավորապես 0,7% գումար ամսական, իսկ հիմա՝ մինչև 0,3 %: Այս հարցի համատեքստում կարևոր է հասկանալ, թե ինչ նպատակ է դնում մարմինն իր առջև:

Նախարարին հետաքրքրեց, թե որքան ժամանակ է հարկավոր, որպեսզի տեսչական մարմինը Խորհրդի անդամներին աղյուսակի ձևով, պատկերավոր ներկայացնի առաջիկայում իր պատկերացումները՝ արտահայտված թվերով, թե կառուցվածքի որ մոդելի տեսքով գործելու դեպքում հնարավոր կլինի ունենալ օպտիմալ հաստիքակազմ, որին կտրվեն հնարավորինս մեծ գումարներ: Խոսելով ոլորտի կարևորության մասին՝ նախարարն առաջարկեց կազմակերպել համատեղ քննարկում Ա. Ասոյանի և իր մասնակցությամբ, մշակել առաջարկություններ և ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին:

Նախարարը նշեց, որ սա բացառիկ հնարավորություն է, որով տեսչական մարմինը կարող է դառնալ օրինակելի մյուս մարմինների համար՝ ունենալով մեծ հաստիքակազմ՝ շատ արագ անցնի օպտիմալացման և ցույց տա, որ հնարավոր է պետական համակարգում աշխատողի վրա դրված պարտականությունները համահունչ դարձնել ստացած աշխատավարձին: Գուցե հիմա հնարավոր չլինի լուծում տալ հարցին, սակայն հնարավոր է կողմնորոշվել, թե որ ուղղությամբ ենք ցանկանում շարժվել:

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի և «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի օրինակով Բ. Պիպոյանը խոսեց գործառույթները կոնկրետ աշխատակիցներին հանձնարարելու կարևորության մասին, որպեսզի հստակեցվի, թե ով ինչ գործառույթ է իրականացնելու, օրինակ եթե կենդանիների համարակալում է կատարվելու, ո՞վ է վարելու մատյանները, արդյո՞ք 24-ժամյա ռեժիմով է աշխատելու «թեժ գիծ» ծառայությունը: Երբ հայտարարում ենք քաղաքացիներին, թե ինչ խնդիր եք տեսել՝ զանգահարեք, նկատի ունենք ժամը 9:00-ից մինչև 18:00-ն ընկած ժամանակահատվա՞ծը, թե՞ 24-ժամյա ռեժիմը: Նախատեսվում է արդյո՞ք ունենալ որևէ աշխատակից՝ 24-ժամյա աշխատանք ապահովելու համար: Գոյություն ունի՞ սննդի շղթայի օպերատիվ արձագանքման համակարգ, օպերատիվ տեղեկատվության փոխանակման ՌԱՏՍ համակարգ, սրա գործառույթը, ո՞ր բաժնի կողմից է իրականացվելու՝ ռիսկերի, տեղեկատվության, թե՞ որևէ այլ բաժնի միջոցով: Նույնը ստուգումների կազմակերպման մասով՝ բավարարում է արդյո՞ք տեսչական մարմնի մարդկային ռեսուրսը (քանակական և որակական) ստուգումների պլանի այդ ծավալն իրականացնելու համար: Օրինակ, եթե ստուգումը տևում է 5-10 օր, նույն տեսուչը 2 տնտեսվարողի մոտ կարո՞ղ է ստուգում իրականացնել, թե ոչ:

Ա. Պողոսյանի կարծիքով, տեղեկատվությունը որոշ իմաստով սահմանափակ է, քանի որ հայտնի չէ ստորաբաժանումների ներքին կազմը, թե կոնկրետ ստորաբաժանումը քանի հաստիքից է բաղկացած՝ կառավարման արդյունավետությունն ապահովելու համար: Նա առաջարկեց նշել, թե յուրաքանչյուր ստորաբաժանմանը քանի հաստիք է նախատեսվում հատկացնել: Դեռևս հաստատված չէ պետական համակարգի մարմիններում օպտիմալացման ռազմավարությունը, ուստի պետք է արձանագրել, որ մեծաթիվ հաստիքակազմ ունենալու դեպքում թեթև ծանրաբեռնված աշխատակիցների հաշվին ծանրաբեռնվածներին ավելի մեծ գումար հատկացնելը ժամանակավոր, իրավիճակային լուծում է:

Նախարարն առաջարկեց մեկօրյա ժամկետում ներառել արդարադատության նախարարության կարծիքը, շրջանառել փաստաթուղթը, եռօրյա ժամկետում ստանալ Խորհրդի բոլոր անդամների կարծիքները, ամփոփել և լրամշակված տարբերակը դնել էլեկտրոնային քվեարկության: Նա խնդրեց առաջարկությունները ներկայացնել հիմնավորված: Եթե էլեկտրոնային քվեարկությամբ որոշվի հավանություն տալ նախագծին, այն կներկայացվի Հայաստանի Հանրապետության վարչապետին, եթե Խորհուրդը որոշի դեմ քվեարկել, կառաջանա Խորհրդի արտահերթ նիստ գումարելու անհրաժեշտություն:

Խորհրդի՝ քվեարկությանը մասնակցած անդամների 6 կողմ և 2 դեմ 10 (Ա. Ասոյան, Ռ. Գրիգորյան) ձայներով որոշվեց՝

1) Որոշման նախագծի 26-րդ կետի 4-րդ ենթակետում կատարել լրացում՝ «գնահատման» բառից հետո ավելացնել «(կառավարման)» բառը:

Խորհրդի՝ քվեարկությանը մասնակցած անդամների 9 կողմ ձայներով որոշվեց՝

2) Հանձնարարել Տեսչական մարմնի ղեկավար Գ. Ավետիսյանին՝
   ա. 1-օրյա ժամկետում Խորհրդի անդամներին էլեկտրոնային եղանակով տրամադրել որոշման նախագծի լրամշակված տարբերակը և ամփոփաթերթը,
   բ. Խորհրդի անդամների կողմից ստացված համաձայնությունը կամ դիտողություններն ու առաջարկությունները 3-օրյա ժամկետում տրամադրել Գրասենյակին,
   գ. Գրասենյակի կողմից փաստաթղթի լրամշակված տարբերակը ստանալուց հետո անմիջապես դնել էլեկտրոնային քվեարկության,
   դ. էլեկտրոնային քվեարկության արդյունքների հիման վրա կազմված արձանագրության և որոշման նախագիծը ներկայացնել Խորհրդի նախագահի հաստատմանը,
   ե. նախագծի լրամշակված տարբերակի՝ հավանության արժանանալու դեպքում այն ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին,
   զ. նախագծի լրամշակված տարբերակի՝ հավանության չարժանանալու դեպքում հնարավորինս սեղմ ժամկետում հրավիրել Խորհրդի արտահերթ նիստ:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի ստուգումների տարեկան ծրագրին հավանություն տալու մասին

(Գ. Սարոյան, Ա. Ասոյան, Գ. Ավետիսյան, Ա. Առաքելյան, Տ. Խաչատրյան)

Գ. Սարոյանը ներկայացրեց, որ ստուգումների պլանի կազմման նախապատրաստական աշխատանքները սկսվել են Երևանի և մարզային կենտրոնների մասնագետների կողմից իրականացված գույքագրումով՝ նպատակ ունենալով ճշգրտել և

գրանցել տնտեսվարող սուբյեկտների գործունեության դադարեցման կամ լուծարման, փաստացի գործունեության վայրի և գործունեության տեսակի (տեսակների) վերաբերյալ գրանցված տեղեկությունները, ինչպես նաև նոր ստեղծված օբյեկտները: Արդյունքում տնտեսվարող սուբյեկտների տվյալների բազայում գրանցված են սննդի շղթայի թվով 10600 օպերատորներ: Սննդամթերքի անվտանգության ոլորտի 2020 թվականի ստուգումների պլանում ներառվել է 922 տնտեսվարող սուբյեկտ, որից 786-ը բարձր ռիսկային են, 101-ը՝ միջին ռիսկային և 35-ը՝ ցածր ռիսկային:

Նախարարի հարցին, թե Տեսչական մարմինն ունի արդյոք տնտեսվարող սուբյեկտների գործունեության ծավալի մասին տեղեկատվություն, Գ. Սարոյանը պատասխանեց, որ պլանը կազմվել է գործող մեթոդաբանությամբ ռիսկայնության հաշվարկի մեխանիզմով: Ստուգումների պլանից դուրս մնացած տնտեսվարող սուբյեկտների մոտ վերահսկողական մեխանիզմները կիրառվում են արձանագրված բողոքների հիման վրա:

Ա. Ասոյանն առաջարկեց տնտեսվարող սուբյեկտների անվանումների կողքին ավելացնել տնտեսվարող սուբյեկտների մոտ վերջին ստուգման ամսաթվերը, կցել ժամանակացույցը, վերանայել տնտեսվարող սուբյեկտների ամբողջական բազան: Առաջարկվեց քվեարկության հետ մեկտեղ հանձնարարություն տալ, որ մինչև առաջիկա եռամսյակի ավարտը նորից վերանայվի ստուգումների ծրագիրը տնտեսվարող սուբյեկտների ամբողջական բազայի հիման վրա:

Ա. Ասոյանը նշեց, որ ստուգումների պլանում բուսասանիտարիան և անասնաբուժությունը բացակայում են, իսկ վերանայված մեթոդաբանությունը նախարարների ֆինանսատնտեսական կոմիտեում հավանության է արժանացել, իսկ հինգշաբթի կառավարության նիստում հավանաբար կընդունվի, և դրա հիման վրա ամբողջ ծրագիրը նորից պետք է վերանայվի: Դա հնարավոր կլինի անել վարչապետի հանձնարարականով, քանի որ «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նման հնարավորություն տալիս է:

Ամփոփելով քննարկումը և հաշվի առնելով այն, որ առաջիկայում հաստատվելիք մեթոդաբանությունը կարող է ազդել սուգումների պլանի վրա, նախարարն առաջարկեց հարցը դնել քվեարկության և հետագայում Հայաստանի Հանրապետության վարչապետի համաձայնությամբ, ըստ անհրաժեշտության, վերանայել այն:

Խորհրդի՝ քվեարկությանը մասնակցած անդամների 9 կողմ ձայներով որոշվեց՝

1) Հավանություն տալ 2020 թվականի ստուգումների պլանին:
2) Հանձնարարել Տեսչական մարմնի ղեկավար Գ. Ավետիսյանին՝ օրենքով սահմանված կարգով հաստատել և հրապարակել Տեսչական մարմնի պաշտոնական կայքում:

3. «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

(Գ. Սարոյան, Ա. Առաքելյան, Տ. Խաչատրյան)

Գ. Սարոյանը ներկայացրեց Տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը վերանայելու անհրաժեշտությունը, որը պայմանավորված է մարմնի անվանափոխությամբ, ինչպես նաև պետական վերահսկողության շրջանակներում սննդամթերքի կամ կենդանական ծագման հումքի՝ սպանդանոցային ծագման մասին հարցը ստուգաթերթում ներառելով (պահանջը պետք է գործի 2020 թվականի հունվարի 15-ից):

Խորհրդի՝ քվեարկությանը մասնակցած անդամների 9 կողմ ձայներով որոշվեց՝

1) Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին:

4. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2020 թվականի պահպանման ծախսերը (գնումների պլանի փոփոխված տարբերակ)

(Ն. Հայրապետյան, Ա. Ասոյան, Ա. Պողոսյան, Ռ. Գրիգորյան, Տ. Խաչատրյան)

Ն. Հայրապետյանը ներկայացրեց, որ Տեսչական մարմնի 2020 թվականի կարիքների համար անհրաժեշտ է կատարել արտաբյուջետային հայտերի փոփոխություն, մասնավորապես, իրականացնել հոդվածային և ներհոդվածային փոփոխություններ, որոնց մի մասի գնման պահանջը 2019 թվականի երկրորդ կիսամյակում վերացել է, նվազել կամ ավելացել (Էներգետիկ ծառայություններ /4212/ տնտեսագիտական հոդվածով 2020 թվականի արտաբյուջետային հայտով անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել 1500.0 հազ. դրամի գազի բաշխում: Ապահովագրական ծախսեր /4215/ տնտեսագիտական հոդվածով նախատեսվել է 600.0 հազ. դրամ, սակայն, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 26-ի «Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» N 1308-Ա և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 6-ի «Գույք ամրացնելու մասին» N 725-Ա որոշումները՝ Տեսչական մարմնին ամրացվելու են

ավտոտրանսպորտային միջոցներ, ուստի առաջարկվում է ձեռք բերել 800.0 հազ. դրամի փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայություններ: Գույքի և սարքավորումների վարձակալություն /4216/ տնտեսագիտական հոդվածով նախատեսված 2500.00 հազ. դրամի գնման պահանջը վերացել է: Ներկայացուցչական ծախսեր /4237/ տնտեսագիտական հոդվածով 7000.0 հազ. դրամը նախատեսված է Տեսչական մարմնի պաշտոնական պատվիրակությունների այցերի համար, որի շրջանակներում անհրաժեշտ է կազմակերպել հյուրընկալություն, նախատեսվում է նվազեցնել, սահմանելով 3320.00 հազ. դրամ: Մասնագիտական ծառայություններ /4241/ տնտեսագիտական հոդվածով 2020 թվականի արտաբյուջետային հայտով նախատեսվել է 16,000.0 հազ. դրամ, առաջարկվում է սահմանել 20980.00 հազ. դրամ, որից 15980.00 հազ. դրամն օգտագործվելու է թունավորման դեպքերի, քաղաքացիների դիմումների, բողոքների հիման վրա առաջացած սննդամթերքի լաբորատոր հետազոտությունների համար և 5000.00 հազ. դրամը մասնագիտական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների համար, որն ապահովելու է կենտրոնական ապարատի անվտանգությունը: Նախագծահետազոտական ծախսեր /5134/ տնտեսագիտական հոդվածով նախատեսվում է կատարել ջեռուցման աշխատանքների համար նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում 2000.00 հազ. դրամի չափով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 6-ի «Գույք ամրացնելու մասին» N 725 Ա որոշումը իրականացնել կադաստրային քարտեզագրման ծառայություններ 400.00 հազ. դրամի):

Խորհրդի՝ քվեարկությանը մասնակցած անդամների 9 կողմ ձայներով որոշվեց՝

1) Հանձնարարել Տեսչական մարմնի ղեկավար Գ. Ավետիսյանին՝
   ա. հարցը էլեկտրոնային եղանակով ներկայացնել Խորհրդի անդամներին,
   բ. ստացված առաջարկությունների և դիտողությունների հիման վրա գնումների պլանի փոփոխված տարբերակը դնել էլեկտրոնային քվեարկության,
   գ. քվեարկության արդյունքների մասին արձանագրության և որոշման նախագծերը ներկայացնել ստորագրման:

5. «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

(Գ. Սարոյան, Ա. Ասոյան, Ա. Պողոսյան, Տ. Խաչատրյան)

Գ. Սարոյանը ներկայացրեց, որ 2019 թվականի արտաբյուջետային հաշվի միջոցների եկամտային մասը կազմում է 86,503.6 հազար ՀՀ դրամ, սակայն ներմուծվող սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների գումարը 01.11.2019 թ. դրությամբ արդեն կազմում է 105,967.8 հազար ՀՀ դրամ, որից Տեսչական մարմինն ունի 39,044.8 հազար ՀՀ դրամ պարտք փորձաքննություն կատարած կազմակերպություններին, իսկ նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների գումարը կկազմի մոտավորապես 40,000.0-41,000.0 հազար ՀՀ դրամ (հիմք ընդունելով նախորդ տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվարկը): Նա հայտնեց, որ 2019 թվականին 19,589.6 հազար ՀՀ դրամ վճարվել է 2018 թվականից մնացած պարտքը: Տեսչական մարմնի՝ ներմուծվող սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների գումարների օգտագործման ուղղությունների 2019 թվականի նախահաշվի եկամտային մասում նախատեսվել է ավելացնել ևս 80,000.0 հազար ՀՀ դրամ, որը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջը, համաձայն որի՝ փորձաքննության վճարը փոխանցվում է լիազոր մարմնի հատուկ հաշվին, որը հետագայում փոխանցվում է փորձաքննություն կատարած կազմակերպություններին՝ յուրաքանչյուր փորձաքննության համար գնացուցակով սահմանված չափով: Եկամտային մասի ավելացումը կապված է 2019 թվականի ներմուծվող սննդամթերքի լաբորատոր փորձաքննությունների ավելացմամբ:

Գ. Սարոյանը ընդգծեց, որ հարցը բովանդակային առումով ծառայությունների փոփոխություն չի նախատեսում, միայն արտաբյուջեի միջոցների հաշվին ավելացվում է լաբորատոր ծառայությունների մատուցման համար տրամադրվող գումարի չափը:

Ա. Պողոսյանը հիշեցրեց, որ 2020 թվականից արտաբյուջետային միջոցների օգտագործման համար իրավական հիմքեր չեն լինելու:

Ռ. Գրիգորյանը առաջարկեց հարցը քվեարկել էլեկտրոնային եղանակով, Տեսչական մարմնի կանոնադրության և կառուցվածքի հարցերի հետ միաժամանակ:

Ա. Ասոյանը պարզաբանեց, որ 2020 թվականի գնումների պլանը հաստատված է բյուջեի մասով, իսկ արտաբյուջեի մասով դեռ հաստատված չէ:

Նախարարն առաջարկեց ընդունել Ռ. Գրիգորյանի առաջարկությունը և արտաբյուջեի վերադասավորումների մասին հարցը դնել էլեկտրոնային քվեարկության:

Նախարարի հարցին, թե ավելացվող գումարն ուղղորդվելու է նույն լաբորատորիային, թե այլ չափորոշիչներով ընտրված լաբորատորիաների, Գ. Ավետիսյանը պատասխանեց, որ դրանք ուղղվելու են նախորդից տարբեր երկու լաբորատորիաների:

Ռ. Գրիգորյանը խնդրեց պարզաբանել, թե յուրաքանչյուր վճարումը կախված է արդյոք մեկ գործի արժեքից, և 10 մլն ՀՀ դրամ գումարի հաշվարկից հանվել է վարչական ծախսերի համար կատարված վճարը, թե ոչ:

Ա. Ասոյանը պարզաբանեց, որ նոր գնում չի լինելու, նախատեսվող փոփոխությունը խմբագրական է:

Ա. Պողոսյանը խմբագրական առաջարկը փոխանցեց գրավոր տարբերակով (կցվում է Հատուկ կարծիք N1):

Խորհրդի՝ քվեարկությանը մասնակցած անդամների 9 կողմ ձայներով որոշվեց՝

1) Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին:

6. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1515-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ

(Գ. Սարոյան, Ա. Ասոյան, Ա. Պողոսյան, Ռ. Գրիգորյան, Գ. Ավետիսյան, Տ. Խաչատրյան)

Գ. Սարոյանը ներկայացրեց, որ նախագծով առաջարկվում է լաբորատոր ծառայությունների համար գնումը կատարել մեկ անձից՝ հաշվի առնելով ժամկետի սղությունը և հարցի հրատապությունը:

Գ. Ավետիսյանը պարզաբանեց, որ բյուջեով նախատեսված 10 միլիոն ՀՀ դրամը սպառվել է, իսկ արտաբյուջեում առկա գումարը ծախսելու իրավասություն Տեսչական մարմինը չունի, հետևաբար, առաջարկվում է հարցը լուծել մեկ անձից գնման ընթացակարգով:

Նախարարին հետաքրքրեց այն, թե ինչպես է որոշվել, որ կազմակերպությանը պետք է հատկացնել ավելացվող գումարը, ինչու չի ընտրվել նույն կազմակերպությունը, քանի որ վերջինիս կողմից կա մատուցված ծառայություն և այդ ծառայությունների որակը գնահատելու հնարավորություն: Գ. Ավետիսյանը պարզաբանեց, որ այլ կազմակերպություններ ընտրելը պայմանավորված է նախորդի մեծ ծանրաբեռնվածությամբ:

Ա. Պողոսյանի կարծիքով, առաջարկվող տարբերակը կազմակերպությունների համար չի ապահովում մրցակցային պայմաններ, չեն նշվում կանխավճար, որակ ապահովելու և պարտադիր այլ պահանջներ: Հարցի վերաբերյալ իր առաջարկությունները նա փոխանցեց գրավոր տարբերակով (կցվում է հատուկ կարծիք N2):

Ռ. Գրիգորյանը ներկայացրեց, որ Ա. Պողոսյանի առաջարկությամբ առաջնորդվելու դեպքում կառավարության որոշում ունենալու պահանջը վերանում է:

Ամփոփելով քննարկումը՝ նախարարն առաջարկեց ընդառաջել Տեսչական մարմնին և օրակարգային հարցը դնել քվեարկության:

Խորհրդի՝ քվեարկությանը մասնակցած անդամների 8 կողմ և 1 դեմ (Ա. Պողոսյան) ձայներով որոշվեց՝

1. Հավանություն տալ որոշման նախագծին:
2. Հանձնարարել Տեսչական մարմնի ղեկավար Գ. Ավետիսյանին՝ որոշման նախագծին կցել առավել փաստարկված հիմնավորումներ:

Խորհրդի նախագահ Տ. Խաչատրյան

Խորհրդի քարտուղար / Է. Բասենցյան